ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/05/3116

26 06 **2018թ.**

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍՈՒՐԵՆ ԴԵՀԵՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դեհերյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին 2018 թվականի հունիսի 21-ին հասցեագրած Ձեր գրության, տեղեկացնում եմ, որ՝

1. Մարզի տարածքում գործում են 9 մանկապատանեկան մարզադպրոց, որոնցից Գավառի, Մարտունու, Սևանի, Ճամբարակի, Վարդենիսի N1 և քաղաքային մարզադպրոցները համայնքային, ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցը մարզային, Սևանի ջրային մարզաձևերի հանրապետական մարզադպրոցը հանրապետական ենթակայության են, իսկ Մարտունու տարածաշրջանում գործող երկրորդ մարզադպրոցը պատկանում է «Սևան» մարզական հասարակական կազմակերպությանը.
2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության մարզադպրոցում հատուկ հաշմանդամային մարզախմբեր չեն գործում.
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքային ենթակայության մարզադպրոցներում հատուկ հաշմանդամային մարզախմբեր չեն գործում.
4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության մարզադպրոցում հաշմանդամություն ունեցող մարզիկներ չեն մարզվում.
5. Գավառի մարզադպրոցում մարզվում է 1 հաշմանդամություն ունեցող մարզիկ (ուժային եռամարտ), մարզի՝ համայնքային ենթակայության մյուս մարզադպրոցներում հաշմանդամություն ունեցող մարզիկներ չեն մարզվում:

Միաժամանակ հայտնում եմ, որ Սևանի ջրային մարզաձևերի մարզադպրոցի մարզիկ Գարիկ Փիլոսյանը՝ որպես հաշմանդամութուն ունեցող մարզիկ, մասնակցել է միջազգային մրցաշարերի և աշխարհի առաջնությանը, իսկ «Սևան» մարզական հասարակական կազմակերպության մարզադպրոցի սան Նվեր Գրեյանը մասնակցել է բազկամարտի մարզային առաջնությանը:

Հարգանքով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
Կատարողներ՝ Գեղամ Զարվադարյան
Ալեքսան Առաքելյան
հեռ. 060650621